

ԱՐՕՏ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 10·

ԱՄՍԱԳԻՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31
1874·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՄԱՆ
ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԵԱՆ(*)

Մի գործ իսկապէս այն արժէքն ունի, ինչ արժէք որ ունի գործողի դիտաւորութիւնն. կամ աւելի պարզ ասել, գործողի դիտաւորութիւնն գործոյ արժանաւորութեան ճշմարիտ չափն է։ Սոյն ճշմարտութիւնն չը ճանաչել, կը նշանակէ կործանել բոլանդակ բարոյականութիւնն և նաեւ ուրանալ բարոյականութեան սկզբունքներ։ Ամեն մարդ գիտէ, որ այս այսպէս է. բայց ամեն մարդիկ դարձեալ կը մոռանան սոյն ճշմարտութիւնն։ Եւ միթէ այսչափ միայն. աւա՜ղ, երբ կ'ուզեն մարդիկ մի բարի գործոյ արժանաւորութիւնն նուազեցնել, այն ժամանակ միայն գործողի դիտաւորութիւնն ձեռք կ'առնուն. այն ժամանակ միայն ամեն ճիգ կը թափեն, կը կրկտեն, կը խծբծեն մարդոյ դիտաւորութիւնն և գործն անիրաւ հանելու համար միայն կը պահպանեն այս կանոնն։ Զարամտութիւնն, երբ կը տեսնէ թէ մի մարդոյ համբաւն կը ծաղկի իւր գործքերու վերայ իբրեւ մի հաստաբուն ծառի վերայ, իսկոյն կը սազակի իբրեւ որդն մինչեւ նորա փարուց բարուց արմատներն, որպէս

(*) Հարուածակութիւն և վերջ. տես թիւ 9։

digitised by A.R.A.R.@

զի կրներով թարշամեցնէ. բայց թէ գործն վատ է արդեօք և կամ պարզապէս միայն թերակատար է, ահա այս միայն կը գտանեն առանց դիտաւորութիւնն քննելու։ Եւ մեք, որ լաւ հասկցած ենք թէ՝ մի գործ առերես կարելի է բարի երեւիլ, բայց եթէ մինչեւ սկզբունքն թափանցենք, կարող է վատ լինիլ. մեք, որ վատութիւնն գտնելու համար այսչափ յաջողակ ենք, ընդհակառակն չենք ուզեր խորհիլ և մտածել, որ մեր աչքին երեւցած թերի կամ անօգուտ գործն կարող է ունենալ խիստ լաւ սկզբունք։ Բայց այն բարի սկզբունքն գտնելու համար մեք միշտ անիսկի ենք և անտարբեր։ Ի՞նչ է արդեօք սորա պատճառն. արդեօք այն է, որ շատ անգամ առակաւ կը խօսուի թէ՝ մարդոյ միտքն հակամիտ է առ չարն, քան առ բարին։ Ա՛խ, ողբալի և տմարդի առած։ Սակայն եթէ միոյն տան ճշմարիտ լինի այս առածն, միոյն տան անդամ պէտք է աշխատիլ սուտ հանել զայն և այն ժամանակ միայն հաւատալ գործոյ գեշութեանն կամ վատութեանն, երբ յայտնի և անհերքելի ապացոյցներ կան։ Ինչու համար արդեօք հետաքրքրութեամբ չենք լիներ և չենք փութար որոնել բարին, որ կարող է շատութեան մեծ գտնուիլ։ Ինչու համար բարին այնպիսի հետաքրքրութեամբ չենք որոներ, ինչպէս կ'որոնենք չարն։ Ինչու համար մանաւանդ մեր Փրկչի թշուառ աշակերտին նման ամենէն առաջ և միմիայն կը տեսնենք գործոյ տկար կողմն և բարի դիտաւորութեան հետ խառնուած սխալմունքն։ Ինչու համար փոխանակ այսպէս անելու, նախ և առաջ մեր աչքերն չենք յառներ բարի նպատակին վերայ, որ նոյնպէս յայտնի կ'երեւի մեզ և աւելի կարեւոր է ուշադրութեան։ Քանի քանի անգամ հաղուագիւտ և բարի նպատակներն գտնելէն զկնի. փոխանակ ուրախանալու, կը ջանամք յարգելի նը-ւազեցնել և ասել թէ՝ այս սովորական է ամենուն. և այնչափ սովորական, որ որոնելու անգամ հարկ չը կայ։ Ոմն անգութ և թիւր հետեւութիւն։ Զը մեղանչենք, եղբարք, եւ երբ կարող չենք բացարձակապէս գովել մեր նը-մանեաց միոյն գործը, թող չը գովենք, այս արդարացի է, բայց զգուշանանք չը վիրաւորել և չը վշտացնել գործողն սիրտն։ Ընդհակառակն՝ ցոյց տանք գործողին, որ մեք կը ճանաչենք և կը գնահատենք իւր բարի կամքն. ցոյց տանք, որ ամենէն առաջ այն բարի կամքն է, զոր մեք կը ճանաչենք և կը սիրենք։ Շնորհակալ լինինք գործողէն այսպիսի մի աշխարհի մէջ, ուր մեք եւս գիտենք, որ խիստ սակաւ են բարին կամեցողներն. շնորհակալ լինինք, բարեմաղթենք, որ բարի դիտաւորութիւն ունեցած է և բարութեան ցանկացած է։ Խստութեամբ եւ արհամարհոտ ու դաժան դատողութեամբ չը թառամեցնենք անձնուիրութեան այն նորաբողբոջ և փափուկ ծաղիկն, որ սկսած է ծաղկիլ նորա ծոցին մէջ։ Զը լինինք խմոստուն առանց չափու և սահմանի, չը լինինք իրաւապէտ և իրաւարար առանց գթութեան և ողորմութեան։ Մի՛այն չը գտանենք, այլ և սիրենք։ Մշակենք քնքուշութեամբ, ոռոգենք սիրով և բարի յաժարութեամբ, և չը վիրաւորենք այն տունկն, զոր բարեբախտաբար կը տեսնենք սերմանուած։ Յարգենք եւ պատուենք բարի դիտաւորութիւններն, առանց ծաղրելու եւ առանց չափազանցութեան։ Կ'ասեն թէ՝ դժոխքն ապայատակուած է բարի դիտաւորութիւններով, բայց պէտք է իմանալ. որ Մարիամի դիտաւորու-

digitised by A.R.A.R.@

թեան նման չեն այդ դիտաւորութիւններն. Մարիամի դիտաւորութեան նման դիտաւորութիւններն են, որով զարգարուած է երկինքն և կը ցոլայ շող ի շող, և երբ մեք կը յարգենք այսպիսի դիտաւորութիւններն, կը յարգենք զԱստուած, որ զայնս կ'օրհնէ, կը յարգենք և զՀոգին Սուրբ, որ զայն կը ներշնչէ։

Բայց յայտնենք, երբ կը դատենք, պէտք է ի հաշիւ առնուինք դրից եւ կարօտութեանց զանազանութիւնն։ Աշակերտներն թերի էին այս երկու կանոնին մէջ. թերի էին առաջնոյն մէջ. երբ կ'անարգէին Մարիամի սիրոյ եւ ուրախութեան զեղմունքն, առանց նայելու, որ կարող չէ նա իրենց պէս ամէն տեղ ուղեկցիլ և հետեւիլ Յիսուսին, վասն զի մի տկար կին էր, և միայն հեռուէն կը վայելէր նորա աստուածային ներկայութիւն։ Թերի էին աշակերտներն երկրորդին մէջ. երբ կամէին մի կնոջ փոփուկ և եռանդոտ սիրտն այն սահմանին մէջ ամփոփել, ուր ամփոփուած էին իրենց յարգն ու եռանդն առ Յիսուս։ Կան այսպիսի բնաւորութիւններ, եւ բազմ կենաց մէջ կան այնպիսի վայրկեաններ, որոց վերայ պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնել։ Պէտք է այնպէս անել, որ Աստուծմէ մեզ սարդեւուած ամէն հոգեւոր կարողութիւններն գոհ լինին։ Ինչպէս որ անիրաւութիւն է եռանդն արգելուլն, նոյնպէս անմտութիւն է եռանդին հրամայելն, կամ զայն սահմանի տակ դնելն։ Անհնարին է բարեպաշտ հոգւոյն սահման դնել և հրամայել թէ միմիայն այս եղանակաւ պէտք է պատուես և պաշտես զայն, զոր կը սիրես։ Ամեն հոգիներու խորոց մէջ կայ նաեւ այնպիսի մի կարօտութիւն, որ ոչ թէ կանոնաւորուելու, այլ ծաւալուելու կը ձգտի, կարօտութիւն, որ երբեմն մեզմէն դուրս կը ցատկի և կը ջանայ միացնել զմեզ մեր պաշտած առարկային հետ, աւելի զգալի եւ աւելի անընդմիջական կերպիւ, քան թէ պարզ հնազանդութեամբ։

Ո՛չ հնազանդութիւն է այս և ոչ պարտաւորութիւն, ոչ կարես հրամայել և ոչ կարես սոգտանել։ Այս է հոգւոյ բուռն զօրութիւնն։ Այն բուռն յուզումն, այն եռանդեան շարժումն, որ ի վեր կը բարձրացնէ զհոգին իւր սովորական տպաւորութիւններէն և կը տայ հոգւոյն զգացումն և ճաշակ աստուածութեան, այն յուզումն կը կազդուրէ, կը զօրացնէ զհոգին և հնազանդութիւնն ու պարտաւորութիւնն աւելի քաջալեր եւ աւելի սիրելի կը կացուցանէ նորա համար։ Պէտք է իմանալ, որ ամէն բան՝ ինչ որ մեզ գեղեցիկ կ'երեւի, միշտ բարի չէ. բայց Աստուած կամեցած է, որ ամէն բան, ինչ որ բարի է, գեղեցիկ լինի. և արդէն բարին և գեղեցիկն ի սկզբան մի և նոյն անուանն ունէին. վասն զի գեղեցիկն թէեւ միշտ բարի չէ, բայց բարին միշտ գեղեցիկ է։ Գեղեցկութիւնն ճշմարտութեան մի մասն և մի ձեւն է։ Ով որ կը տարակուսի այս մասին, թող կարդայ Սուրբ Գիրքն, յորում՝ ճշմարտութիւնն ու գեղեցկութիւնն այնչափ սերտիւ միացած են իրարու հետ, որ անհնարին է իրարմէ բաժնել. և ամենէն վեմ՝ ասացուածներն ու խրատներն արտայայտուած են ամենէն վեմ՝ և ամենէն պատնէլի լեզուաւ։ Հոգեկան եռանդն դատապարտելէն առաջ, թող կարդան Ս. Գիրքն, որ լի է եռանդեամբ, որ զեղուն է բուռն զգացմանց յորդութեամբ, ուր կը տեսնենք մարգարէից սիրան «Որ կ'եռայ վեմ՝ խօսքեր արտասանելու համար»։ Բոլանդակ Աս-

digitised by A.R.A.R.@

տուածաշունչն մի անուշահոտութեան ամանն է, որոյ անմահական բուրմունքներն կը բարձրանան, կը ծաւալին դարուց 'ի դարս մինչեւ յաթոռ Գառին Աստուծոյ։ Բովանդակ Աստուածաշունչն մի վսեմական երգոց դաշնակաւորութիւն է, որոյ քաղցրաձայն և միաբանական գեղգեղանքներն ներշնչուած են Աստուծմէ, և են իբրեւ մի. մերթ ուրախական, մերթ սրտմտական, մերթ մեղմ և մերթ յաղթական, նախերգանք երկնից յաւիտենական դաշնակաւոր երգասացութեան։ Ահա, եթէ Հոգին Սուրբ տակաւին կը կազմէ բարեպաշտ հոգիներու մէջ երգոց նման հառաչանքներ, թողէք, որ նոյն հառաչանքներն բարձրանան դէպ 'ի երկինք իրենց բովանդակ դաշնակաւորութեամբ։ Դուք թողէք Մարիամին, որ իւր անուշահոտութեան ամանն բեկանէ. ահա, քանի քանի Մարիամի նման վառուած բարեպաշտներ կան, որ ամանն ունին՝ բեկանելու և անուշահոտութիւն՝ ծաւալելու։

Կրօնն. որ մի առաքինութիւն է, թողէք, որ նոյնպէս մի երգ լինի, երբ Աստուած կամի։ Ապագային աւանդեցէք զայն, որուն վերայ կը զարմանաք անցեալին մէջ։ Քրիստոնէութիւնն, առաջին դարուց մէջ, գոհ չէր լինիր միայն մարդոյ կենաց մէջ հոսիլ և ընթանալ իբրեւ գետ իւր տաշտին մէջ. այլ կը յորդէր, դուրս կը ելլայր մարդոյ սրտէն և հանճարէն և երկիրն կը ծածկուէր աքանչելիքներով։ Աշխարհն չէր զղջար, և չէր տրտմիր որ ճշմարտութիւնն շքեղութեամբ կը փայլի և մեծամեծ ճշմարտութիւններ՝ պարզ և վսեմ առակներով կը բացատրուին։ Աշխարհն կը տեսնէր, որ ամէն ձեւերով կ'ուզին, կը բողոքին այնպիսի հրաշալիքներ, որոյ վերայ բնական մարդն երբէք դաղափար ունեցած չէր։ Կրօնն կարող է ծնանիլ այժմ և առ յապայն նոյնպիսի հրաշալիքներ. վասն զի ոչ ճշմարտութիւնն եւ ոչ հոգին չեն սպառիր երբէք։

Փութանք ուրեմն, եղբարք, վերջին և ամենակարեւոր դասն բացատրելու։ Բարի դիտաւորութիւնն, որ ոչ այլ ինչ է եթէ ոչ սէր, անտարակոյս կարող է սխալիլ երբեմն. բայց չը սխալիր միշտ և յաւիտեան։ Այն աստուածային հուրն, զոր Հոգին Սուրբ կը վառէ, այն աստուածային հրոյն մէջ լոյսն անբաժանէ ջերմութենէն, և մեք ամէն կերպիւ պարտաւորուած ենք խոստովանիլ, թէ ով որ կամի Աստուծոյ կամքը կատարել, նա կարող է ճանաչել ոչ թէ միայն Աւետարանի յայտնած հիմնական ճշմարտութիւնն, այլ ամէն ճշմարտութիւններ, որոնք կենաց մէջ և պաշտաման մէջ կուտան հիմնական ճշմարտութեան ձեւ մարմին և բացատրութիւն։ Մեր սիրելու ժամանակն իսկ մենք կարող ենք սխալիլ շատ բաներու մէջ և կարող ենք սխալիլ ընդ երկար, բայց սակայն սէրն լոյս է, սէրն միշտ կը ձգտի առ լոյսն։ Ի՞նչպէս կարելի է սիրել զՅիսուս Քրիստոս և միայն բաւականանալ անուշահոտութիւն ծաւալելով նորա գլխոյն կամ նորա սեղաններուն վերայ։ Ի՞նչպէս կարելի է սիրել զՅիսուս Քրիստոս և արհամարհել այն գործերն, զոր նա տուած է գործելու, կամ գործել զայնս այլ եղանակաւ և այլ իմաստով։ Ի՞նչպէս կարելի է սիրել զՅիսուս Քրիստոս և մոռանալ աղքատներն, զորս յանձնած է նա մեզ իբրեւ իրեն ներկայացուցիչներ. անհնարին է այսպէս առնել. վասն զի այնուհետեւ կասկածի կ'ենթարկուի դիտաւորութեան անարատութիւնը, երբ հետեւութիւններն համապատասխան չեն. թէ՛ մարդկութեան եւ թէ՛ իւրաքանչիւր

digitised by A.R.A.R.@

մարդոյ ընթացքն զէպ 'ի ճշմարտութիւն յամի է, և բրտանաշխատ, բայց միշտ ապահով։ — Քրիստոնէութիւնն այս յատկութիւնն ու անպատնալի իրաւունքն ունի, որ նորա անկեղծ աշակերտներն, որոնք ծարաւի են ճշմարտութեան, որոնք հետամուտ են ճշմարտութեան, երբ ըմբռնեն նոյն ճշմարտութիւնն՝ կը հետեւին ըստ շափաւ իրենց քրիստոնէութիւնն։ Այնպիսի սխալմունքներ կամ մոլորութիւններ կան, որոնք անկարելի են։ Տարաբկոյս չկայ, որ Մարիամ կարող չէր, իւր Տիրոջ հետանալէն զկնի, մոռանալ աղքատներն, որոնք իրեն հետ էին, և նոյն իսկ իւր Տէրն իրեն հետ էր յանձն աղքատաց։ Մարիամ իւր առ Փրկիչն ունեցած սիրովն ոչ միայն կարող չէր աղքատներն մոռանալ, այլ ընդ հակառակն որչափ աւելի կը սիրէր զՅիսուս, այնչափ աւելի եւս կը սիրէր զաղքատս։ Այն օրէն տեսաւ Մարիամ զՅիսուս յանձն իւրաքանչիւր աղքատաց։ Այն օրէն աղքատներն սիրելի և պաշտելի եղան, իբրեւ առարկայ աստուածային մարդասիրութեան և իբրեւ կենդանի պատկերներ իւր Փրկչին, զոր կը սիրէր, զոր կը պաշտէր, զոր կ'ողբար և արտասուք ոտքերն կը թանայր։ Մարիամ ամէն աղքատի մէջ տեսաւ այն Փրկիչն, որ տեղ մի չ'ունէր իւր գլուխն դնելու համար. տեսաւ ամէն պանդխտի մէջ այն երկնաւոր Հիւրն, զոր իրենները անգամ չ'ընդունեցին. տեսաւ ամէն տառապելոց և զրկելոց մէջ այն Արդարն, զոր աշխարհի առելութիւնն անարգեց և դատապարտեց։ Վերջապէս կարող չէր Մարիամ թշուառ մեղաւոր մի տեսնել, առանց յիշելու այն մարդասէր Տէրն, որ մեզ արար վասն մեր, զի մեք եղիցուք նոխաւ արդարացեալք։ Ամէն դժբախտ, ամէն հալածեալ կը ներկայացնէր Մարիամի աչքին՝ հեզ, դատապարտեալ և վշտակիր Յիսուսի պատկերն։ Եւ մի թէ ինչ որ մենք Մարիամի համար կը խօսինք ճշմարիտ չէ՞ նոյնպէս ամէն ճշմարիտ քրիստոնէից համար։ Յիսուս Քրիստոս այն նշանաւոր խօսքերն ասելով. "Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք" յաւիտեան աւանդած, յանձնած էր այն թշուառներն, այն աղքատներն, որոնք Յիսուսի Քրիստոսի նմանութեան փառքն ունին, զոր չէր կարելի իրենցմէն բառնալ։ Աղքատն Յիսուս աղքատներն եւ դժբախտներն ժառանգութիւն կատակեց քրիստոնէից. եւ ո՞չ ապաքէն ամէն ժամանակ եւ ամէն երկիրներու մէջ ճշմարիտ քրիստոնէից սիրան միշտ ապահով պատապարան եղած է դըժբախտներու և աղքատներու։

Աւելի յառաջ երթանք և աւելի պարզենք։ Արդէն յարգել զՅիսուս Քրիստոս յանձն աղքատաց, կը նշանակէ ծառայել նմա ըստ արժանւոյն. բայց պէտք է չ'իմաստիլ աղքատաց բարիք առնելու ժամանակ։ Այս մասին կ'ասեն թէ միայն մարդասիրութիւնն բաւական չէ։ Բարեբարութիւնն մի բազադրեալ գործողութիւն է, մի դժուարին արուեստ, որոյ ընկալունքներն և քանի մի տարերքն կարող է աւելի լաւ իմանալ մի անկարեկից, բայց լուսաւորեալ մարդ, քան թէ մի պարզապէս մարդասէր մարդ։ Բայց դիցուք թէ մարդասիրութիւնն փարձ, գիտութիւն եւ հանճար պէտք են, ինչ կը հետեւի այս տեղէն 'ի վերնաս մարդասիրութեան։ Միթէ մարդասիրութիւնն ինքնին գիտութիւն, փարձ և հանճար է։ Միթէ բաւական չէ՞, որ մարդասիրութիւնն արդէն մարդասիրութիւն է։ Եւ երբ մարդասէրն իւր բարեբարելու ջերմ եռանդին մէջ

digitised by A.R.A.R.@

օժանդակ ունի գիտութիւնն, փորձն և հանճարն, այն բնական օգնականներն, միթէ դարձեալ զայն չ'գործէր, ինչ որ պարտ էր գործել։ Միթէ շատ չ'գործէր։ Ի հարկ է աւելի կը գործէ։ Մարդասիրութիւնն սիրան չը բանար առանց միտքն բանալու։ Մարդասիրութիւնն հոգին շահելու համար աւելի ուշադիր կը լինի և գեղեցիկ գիւտեր կը գտնէ։ Նիւթական և բարոյական կարողութիւններն խորին ուշադրութեան կ'առնու, իրար հետ կը միացնէ իւր մտածութեան մէջ, եւ այնպէս կը տրամադրէ, որ նիւթական կարողութիւններն լցուցանելով՝ չը վնասէ բարոյականին, այլ երկուսն եւս միասին բաւականացնէ։ Մարդասիրութիւնն ունի իւր յատուկ արուեստն, իւր յատուկ հանճարն, որով շատ անգամ կը զարմացնէ և կը գերազանցէ ամենէն յաջողակ և ամենէն հնարագէտ ճարտարներն։ Մարդասիրութիւնն ինքնին թերեւս աւելի բան գտած է քան թէ գիտութիւնն, աւելի բան գուշակած է քան թէ հանճարն։ Ինչպէս ամէն խորին զգացումներ, նոյնպէս եւ մարդասիրութիւնն կը բեղմնաւորէ մարդոյ խմացականութիւնն։ Մարդասիրութիւնն չուսուցանէր ամէն բան, բայց քանի քանի բաներ կան, զորս անհնարին է ուսանիլ առանց մարդասիրութեան։

Ինչ որ խօսինք, ինչ եզրակաց որ բացատրենք, եղբայրք, այս յայտնի է, որ սէրն է ճշմարիտ բարին, միայնակ բացարձակ բարին, միայնակ յաւիտենական բարին։ Այնպէս՝ որ եթէ մարդասիրութեամբ իսկ ցանկանք մեք, որ բարեգործութիւն անելու արուեստն կատարելագործուի և միշտ աւելի յառաջէ, պէտք է փափագինք յաւէտ, որ սէրն կատարելագործուի, զբաղեայ և պահպանուի։ Եթէ առանց սիրոյ տեսնէինք, որ աղքատաց և տառապելոց վիշտերն կը սփոփին և վիճակն կը բարւոքի, դարձեալ պարտաւորէինք գոհանալ զԱստուծոյ, որ միշտ կը գթայ մարդկային ցեղին վերայ և միշտ անուշահոտ բաղասան կը հեղու վիրքերու վերայ, որով վիրաւորեցաւ մեզ համար։ Բայց ամենէն աւելի պիտի գոհանանք, ամենէն առաջ պիտի խնդրենք, որ բազմացնէ նա երկրիս վերայ ամէն մարդոյ սրտի մէջ այն փրկարար մարդասիրութիւնն, որ է սկիզբն և հիմն կենաց երջանկութեան, որ է ճշմարտութիւն և գեղեցկութիւն մարդկային էութեան։ Վասն զի ինչ բանի կը ծառայէին սփոփանքն և նաև ամենն թշուառութեանց բարձումն, եթէ ամենէն մեծ թշուառութիւնն չը ջնջուէր, եթէ այսչափ ծոմութեանց մէջ տակաւին աղքատ մնար մարդոյ սիրտն և միշտ չքաւոր 'ի սիրոյ։

Ահա, լաւ հասկացէք Աստուծոյ նախախնամութիւնն։ Դուք կը կարծէք թէ Նա ստեղծած է զմարդասիրութիւնն յօգուտ աղքատաց, բայց իմացէք, որ Նա ստեղծած է մանաւանդ զաղքատութիւնն յօգուտ մարդասիրութեան։ Միթէ կարող չէր Նախախնամութիւնն այնպէս անել, որ բնաւ աղքատներ չը գտնուէին, բայց Նախախնամութիւնն այսպէս չը կամեցաւ և այսպէս չը խոստացաւ, այլ ընդհակառակն խոստացաւ Նա, որ աղքատներն միշտ մեզ հետ ունենանք։ Նա խոստացաւ զայն՝ հարուստներուն, խոստացաւ աղքատներուն։ Վասն զի չը կայ այնպիսի աղքատ, որ իւր ճանապարհին մէջ չը կարողանայ օգնել մի ուրիշ աղքատի։ Կան աղքատներ այն բառի սովորական նշանակութեամբ, կան աղքատներ ուրիշ եղանակաւ, կան թշուառներ մարմնով և մտքով, որոց ամենէն կարօտն և չքա-

digitised by A.R.A.R.@

ւորն իսկ կարող է դարձեալ բան մի տալ, եթէ ինքն քրիստոնեայ է։ Վասն զի այս իմաստով ամենայն միութիւնամբ կարող ենք ասել, որ մարդիկ ներին ամենեն աղքատն դարձեալ այն չափ հարուստ է, որ կարող է փոխ տալ Յուխոնեականին։ Կան աղքատներ, կան թշուառներ, ոչ թէ միայն այն պատճառաւ, որ մեղքն զմեզ թշուառացուցած է և աղքատացուցած, այլ կան նոսա աղքատներ, որպէս զի մարդասիրութիւնն միջոցներ ունենայ զարգանալու, որպէս զի չը քնանայ, չ՝ ներհէ անգործ։ Այս տեղ է ահա Աստուծոյ նախախնամութիւնն, որ կամեցած է չարիքէն բարիք ծնուցանել։ Ուրախանանք ուրեմն, որ մարդասիրութիւնն աւելի եւ աւելի կը դառնայ խոհեմ և անաեստոպիտական։ Պէ՞տք է այսպէս լինիլ։ Ուրախանանք, որ Մարիամ վաճառէ իւր իւղն և երկնքարբեր դեղեար ստանայ։ Բայց ուրախանանք յաւէտ այն զգացման համար, որ զՄարիամ կը մերձեցնէ յոտս Յիսուսի Քրիստոսի և յոտս աղքատաց։ Ուրախանանք, որ կը սիրէ Մարիամ. վասն զի առանց սիրոյ եթէ բոլոր ձեռութիւնդ վատնես աղքատաց՝ ոչ ինչ է։ Հայցենք և խնդրենք, որ քրիստոնէական մարդասիրութեան սկզբունքն, յորմէ կը ծնանին բազմաթիւ բարեգործական հաստատութիւնք, օր աւուր զօրանայ և հաստատուի Եկեղեցւոյ և աշխարհի մէջ։ Աղաչենք և աղօթենք, որպէս զի չքաւորութիւնք և չը դատապարտութիւնք օր մի տեսնել, որ կենաց շունչն հեռանալով այն մանրակրկիտ և հաշուագէտ մարդասիրութեան դրութենէն, միայն նախնի մարդասիրութեան ձեւն ու կեղեւն մնայ աշխարհի վերայ։ Աղօթենք, որպէս զի ճշմարիտ սէրն, աստուածահաճոյ սէրն, օր աւուր աւելի ոգեւորվ, աւելի կենդանանայնէ այն գործերն, որոց վերայ կը զարմանանք։ Աղօթենք մանաւանդ, որ Յիսուս Քրիստոս աւելի ճանաչուի, նորա սէրն աւելի զգացուի, նորա գործն լիովին ընդունուի և հասկացուի։ Վասն զի ապա մէջ կը կայանայ սրտերու վերակենդանութիւնն եւ աշխարհի վերանորոգութիւնն։

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԻՉՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ Երգիչներու վերայ շատ անգամ շատ բաներ գրուած են. բայց այնպիսի գրուածոց մէջ ամենէն նշանաւորն է բազմահմուտ գիտնական բժշկապետ Գէորգ Էմվերդեանի աշխատասիրութիւնն, որ, ԱՅԱԹ–ՆՈՎԱՅ երգչի երգոց տպագրութեամբ (Մոսկվա. 1852) և Զգայնի Երգչաց վերայ արած հաստուն խորհրդածութիւնք, անմահացուցած է ոչ միայն նոյն երգչաց, այլ և իւր անունն իսկ իւր մահէն զկնի։ Իսկ որ կարդացած է ԱՅԱԹ–ՆՈՎԱՆ, տեսած է ակներեւ, որ արժանայիշատակ Էմվերդեանն իւր մեծ պաշտօնին մէջ (վասն զի բժշկապետութենէն զատ՝ յատուկ պաշտօնատար էր Կովկասու Փոխ արքային մօտ) առաջին հայազգին եղած է, որ Հայ ժողովրդեան կեանքն ու կենցաղն, լեզուն ու պատմութիւնն նոյն իսկ ժողովրդի ծոցին մէջ որոնած է և հարցասիրած, Էրէ-ներ, Էրգիներ, Վիճակաբաղեր, Զգայնի Երգիչներու կամ Աշուղներու Երգեր

digitised by A.R.A.R.@